ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«19» 06 2023թ.
№ ՊԵՄՊ2-791

«ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00907104) տնօրեն
Ս. Բեկովին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Ֆուչիկի 27
էլ. հասցե՝ arsenal.gnumner@gmail.com
հեռ.՝ 055-05-77-78

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊ ընկերության միջև 08.10.2022թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-4-17 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊ ընկերությունը 2022թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ., պետք է մատակարարեր պայմանագրով նախատեսված ապրանքներ, որոնք չեն մատակարարվել, 5-րդ չափաբաժնի մասով՝ 554 հատ՝ 32 132 000 ՀՀ դրամի չափով, 7-րդ չափաբաժնի մասով՝ 4420 հատ՝ 1 670 760 000 ՀՀ դրամի չափով, 8-րդ չափաբաժնի մասով՝ 14525 հատ՝ 7 557 212 250 ՀՀ դրամի չափով և 9-րդ չափաբաժնի մասով՝ 5000 հատ՝ 2 850 000 000 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հունիսի 19-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 756 881 516 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 16.06.2023թ. ներառյալ և 3 022 530 ՀՀ դրամ մատակարարումների ուշացումների տույժ իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005570115 հաշվեհամարին փոխանցել 6 055 052 125 ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի շրջանակներում հատկացված կանխավճարի մնացորդ:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ սույն գրությամբ նախատեսված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում «ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊ ընկերության նկատմամբ կկիրառվեն վերոհիշյալ պայմանագրով նախատեսված այլ պատասխանատվության միջոցները:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am